ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

07.հուլիսի.....2016 թվականի N.63-Ա

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով՝ <Ավանի աղի կոմբինատ> ՓԲ ընկերության 2016 թվականի մայիսի 23-ի թիվ 63-17 դիմումը, փոփոխված աշխատանքային նախագծի վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <Ավանի աղի կոմբինատ> ՓԲ ընկերության՝ Երևան քաղաքի Ավանի աղի հանքավայրում արդյունահանում կատարելու համար 2012 թվականի օգոստոսի 23-ի թիվ ՇԱԹՎ-29/003 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել՝ սահմանելով այն. մինչև 2037 թվականի հուլիսի 1-ը:

2. <Ավանի աղի կոմբինատ> ՓԲ ընկերության՝ Երևան քաղաքի Ավանի աղի հանքավայրում արդյունահանման նպատակով տրամադրված թիվ ՇԱԹՎ-29/003 թույլտվությունում

1). <Տրամադրված պաշարների քանակն ըստ կարգերի> տողում՝ <550.0 հազար > թիվը և բառը փոխարինել՝ <735 000 > թվով .

2). <Հանքի տարեկան արտադրողականությունը> տողում՝ <25000.0 > թիվը փոխարինել <35000 > թվով.

3) <Տրամադրված տեղամասի ծայրակետերի կոորդինատները> տողը լրացնել՝ << հորիզոն -373մ ԲL 12- C_1, հորիզոն -343մ ԲL 12- C_1 ԲL21- C_1, հորիզոն -323մ ԲL 12- C_1, հորիզոն -403մ ԲL 12-C_1> թվերով, տառերով և բառերով:

3. Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության հետ 2012 թվականի օգոստոսի 23-ի ՝ թիվ ՊՎ-003 պայմանագրում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆ